

ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ

ԱՍՏՂԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ


Արվեստագիտության թեկնածու

ՄԱՆՐԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԵԶԱԿԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Հայ միջնադարյան մանրանկարչության մեջ բավականին հետաքրքրական և ուշադրության արժանի են Հին և Նոր Կտակարանների զուգահեռների վրա խարսխված ոչ կանոնական պատկերները: Դրանք գլխառիչ ստեղծագործական մտահղացման բացառիկ օրինակներ են, որոնց մեկնաբանումը հնարավորություն է տալիս բացահայտելու պատկերի աստվածաշնչական որոշ ակունքներ: Նկարների ճիշտ մեկնաբանումը պահանջում է սուրբգրային համապատասխան իմացության հետ մեկտեղ նաև քաջածանոթություն մեկնողական գրականությանը¹:

Ստորև ներկայացնում ենք մի շարք եզակի հորինվածքներ, որոնց թեման թեև վերցված է Հին Կտակարանից, սակայն մրանք գտնվում են Նոր Կտակարանում:

14-15-րդ դարերի մանրանկարիչ Ամանուն Սյունեցու նկարազարդած Ավետարանում² պատկերված են Ադամն ու Եվան դրախտում, Կենաց ծառի մոտ, թագավորական հանդերձներով ու թագերով: Ներկայացված է այն պահը, երբ Աստված, հաստատելով Ադամի ու Եվայի ամուսնությունը, Ադամին տվեց իրավունք՝ իշխելու երկրի վրա ստեղծված բոլոր արարածներին (տե՛ս Ավ. 1): Նկարիչը Ադամին ու Եվային պատկերելով Կենաց ծառի մոտ՝ ցանկացել է ցույց տալ մրանց դրախտային ամսահոությունը: Միմյանից նկարը մեկնաբանելիս, ենթադրաբար, ներկայացվել է իբրև Բյուզանդական կայսր Կոստանդինը և մրա մայրը՝ Հեղինեն³:



Նկար 1

Առանձնապես ուշագրավ են Բասենի խազլու գյուղի դպիր Թորոսի ընդօրինակած 1602 թ. Ավետարանի մանրանկարները: Ձեռագիրն ունի 26 նկար⁴: Սկզբում գտնվում են Հին Կտակարանին վերաբերող չորս հորինվածք:

¹ Տե՛ս Հ. Քյուսեյան, Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության, Ա. Էջմիածին, 1995:

² ՄՄ. Ձեռ. 6305:

³ Ա. Միրզայան, Գրիգոր Տաթևացի և Ամանուն Սյունեցի, Ալբոմ, Երևան, 1987, մկ. 34:

⁴ ՄՄ. Ձեռ. 7895:

1. Մեղսագործություն
2. Արտաքսումն դրախտից
3. Զոհաբերումն Աբրահամի
4. Մովսես մարգարե և Նավեի որդի Հեաու:

Զեռագրի 1բ էջի Մեղսագործության պատկերում Ադամն ու Եվան դրախտում են, արգելված պտուղը ճաշակելիս: Նկարի ներքևում գրված է. «Ադամ և Եւա ի մէջ դրախտին»: Հաջորդ՝ 2ա էջում ներկայացված է «Արտաքսումն դրախտից»-ի կանոնական մի պատկեր (տե՛ս մկ. 2): Հորինվածքի վերին մասում Տիրոջ Աջն է՝ ուղղված թզենու ետևում թաքնված Ադամին ու Եվային, որոնք իրենց վախ ու զոջում արտահայտող հայացքներն ուղղել են Աստծո կողմը: Նկարի կենտրոնում ողջ հասակով կանգնած է Քրիստոս և իր հայացքը հառել է մեղսագործներին, իսկ ձեռքը, կարծես թողություն շնորհելով, մեկնել արանց: Նկարի ներքևում կա մկարչի հետևյալ մակագրությունը. «Երոծամ փախսան Ադամ եւ Եւա եւ մտան ի թզենին, յայնժամ եղեալ ՔԱ.»:



Եւ զմէ փախս Ադամ եւ Եւա ի թզենին, յայնժամ եւ ՔԱ
նկար 2

Դրախտից արտաքսվելու պահը պատկերագրությունում ունի իր հայտնի տարբերակներ՝ հեռացնում է կան՝ Աստված և կան՝ Տիրոջ կողմից Միքայել հրեշտակապետը: Աստվածաշնչական պատկերներում Հայր Աստված ներկայացվում է Քրիստոսի կերպարանքով: Դա միջնադարում ընդունված ձև էր, որովհետև երկար ժամանակ եկեղեցին արգելում էր Հայր Աստծուն պատկերել մարմնավորված, քանի որ մարդեղացավ միայն Քրիստոս: Ինչպես Հովհաննու Ավետարանում է ասվում՝ «Եւ Բանն մարմին եղեւ» (Հովհ. Ա 14):

Մարմնավորյալ Բանը Միածին Քրիստոսն էր: Ուրեմն ի՞նչ մեկնություն կարելի է տալ Աստծու կողմից Ադամին ու Եվային դրախտից արտաքսելու պահին մարդեղացած Քրիստոսի հանդես գալուն: Թերևս կարելի է մտածել, որ մկարիչը ցանկացել է ցույց տալ Քրիստոսին որպես Աստծու թե՛ երկնային և թե՛ երկրային Որդի: Ուրեմն մարմնավորված Քրիստոս հայտնվեց դրախտում Աստծո կողմից՝ մեղսագործ Ադամի ու Եվայի մեղքերը քակելու նպատակով: Նկարի մեկնաբանմանը, կարծում ենք, օգնում է Պետրոս առաքյալի «Առաջին թուղթը կորնթացիներին», որում ասվում է. «Քրիստոս մեռավ մեր մեղքերի համար և թե հարություն առավ երրորդ օրը... ինչպես Ադամով բոլորը մեռնում են, նույնպես և Քրիստոսով ամենքը պիտի կենդանանան» (Ա Կորնթ. ԺԵ 3-4, 22):

Մեղսագործության հետ կապված դարձյալ ոչ կանոնական մի պատկեր է համդիպում 1619 թ. Արցախում ընդօրինակված Հայսմավուրքում (ՄՄ. Զեռ. 8812, թ. 399): Զեռագրի լուսանցքում պատկերված է Ադամը Եդեմական ծառի տակ, իսկ ծառի վերևում Քրիստոսի դիմապատկերն է: Թվում է, մկարիչը ցանկացել է Քրիստոսի ներկայությամբ զգուշացնել Ադամին, որ նա չգայթակղվի և կատարի Տիրոջ պատվերը: Մեղսագործության հետ

կապված կան մասնաձևեր, որոնք հանդիպում են շարակնոցներում: 13-րդ դարի շարակնոցներից մեկում պատկերված Ադամն ու Եվան արդեն մերկացած են, բայց Ադամի գլխին դեռևս պահպանվել է թագը (Ձեռ. 2478): Նույն տարբերակը պահպանվել է նկարիչ Սարգիս Խիզանցու 1604 թ. Ավետարանում (ՄՄ. Ձեռ. 6420): Հավանաբար նրանք դեռևս չէին արտաքսվել դրախտից, այլ մոր ճաշակել էին իմացության պտուղը:

Հին և Նոր Կտակարանների կապը հաստատող պատկերագրական ուշագրավ տարբերակներ հանդիպում են Նոր Կտակարանի «Քրիստոսի ծնունդը» ներկայացնող հորինվածքներում: Հիսուսի ծննդյան պատկերման համար հիմք են հանդիսացել Մատթեոսի և Ղուկասի Ավետարանները: Սակայն մանուկ Հիսուսի լոգանքի պահը Ավետարանում չի հիշատակվում: Դա հայտնի է պարականոն պատմություններից⁵: Ֆրանսիացի գիտնականներ Թիերի ամուսինները պարզել են, որ հայկական արվեստում այս տեսարանի ամենահին օրինակը հանդիպում է Տաթևի Սուրբ Պողոս և Պետրոս եկեղեցու (10-րդ դար) որմնանկարում⁶: Հայկական ձեռագրերում լոգանքի ամենավաղ օրինակը հանդիպում է 11-րդ դարի «Մուղու Ավետարան»-ում⁷, ուր Եվան պատկերված է որպես մանկաբարձուհի:

Հայ միջնադարյան գրականության մեջ Եվան հիշվում է որպես Տիրամոր ցավերը բուժող: Գրիգոր Նարեկացին իր «Մատյան ողբերգության» մեջ Աստվածածնին կոչում է Եվայի ցավերը բուժող. «Ողջեցուցիչ երկանցն Եայի»: Պարականոն մի շարականում ասվում է. «Ցնծեցաւ մայրն Եայ, կուսին ծննդեամբն»: Այսինքն՝ ծնվել է իրեն անծնոցի ցավից ազատող մանուկը: 15-րդ դարի նշանավոր բանաստեղծ Առաքել Սյունեցին իր «Ադամ-գրքում» գրում է.

«Յայրին ծընաւ կոյսըն որդին,
Էր մանկաբարձ Եայ միմ»⁸:

Հետագա դարերում Եվային դարձյալ հանդիպում ենք «Ծնունդ» հորինվածքում, բայց ոչ թե որպես մանկաբարձուհի, այլ պատկերված է միայն նրա գծագրված դիմապատկերը, և նրա ներկայությունը մեկնաբանվում է որպես Աստվածամոր ցավերն իր վրա կրող: Նման օրինակներ հանդիպում են հատկապես Վասպուրականի և Արցախի 13-14-րդ դարերի Ավետարաններում⁹:

Եզակի հետաքրքրություն է ներկայացնում Մատենադարանի վերը նշված թիվ 7895 Ավետարանի մեկ այլ մանրանկարը: Ձեռագրի 4ա էջում պատկերված են Մովսես մարգարեն և Նավեի որդի Հեռուն:

Ձեռագրում նկարիչը նրանց պատկերել է միասին: Մովսես մարգարեն նստած է աջ կողմում և ձեռքին պահած ունի գավազան: Նա իր տիրական հայացքը հատել է դիմացը կանգնած Հեռուին, որը խոնարհաբար, ձեռքերը խաչաձև կրծքին դրած, հայացքը ուղղել է

⁵ Տե՛ս Գ. Արգարյանի առաջաբանը՝ Վ. Խեչումյանի «Գիրք գրոց» գրքում, Երևան, 1979 թ., էջ 11:

⁶ Նույն տեղում, էջ 11:

⁷ ՄՄ. Ձեռ. 7736:

⁸ Ա. Մաղոյան, Առաքել Սյունեցի, Ադամգիրք, գլ. ԺԲ, 165, Երևան, 1989:

⁹ Հ. Հակոբյան, Արցախ-Ոստիքի մանրանկարչությունը 13-14-րդ դդ., ձեռ. 316, 4820, Երևան, 1989, էջ 88-89:

